Տէր մեր, դու ետուր ինձ զիշխանութիւն լինել փոխանորդ Երուսաղէմի, իսկ Եղիազարդ այդ նստեալ 'ի քաղաքի աստ, ժողովէ զրամս յանուն Երուսաղէմի, եւ պատրեալ կեղեքէ զՀայս։ Ասէ Նպարքոսն, զի՞նչ պարտի դա քեզ. և նա ասէ, 10 կամ 15,000 դահեկան. ասէ Նպարքոսն, տակաւին ո՞չ զերծաւ 'ի ձեռաց քոց այրդ այդ։ Եհան Մարտիրոս թուղթ մի՝ յորում գոյր կնիք Եղիազարու, և ասէ. սովին թղթով իբր գրով և կնքով Երուսաղէմի արձակեալ զպաշտօնեայս իւր՝ հաւաքէ նոքօք զինչս։

Դարձաւ Նպարքոսն առ Եղիազար, և ասէ. այդ այդպէ՞ս իցէ։ Եւ նա ասէ. յոյս մեծութեան ձերոյ հասեալ կամ՝ դադարել աւուրս ինչ 'ի պանծալի քաղաք թագաւորական. եւ ժողովուրդն՝ որ վայելէ 'ի խնամս առատութեան ձերոյ, տայ և ինձ զկարեւոր պէտս առ 'ի պահելոյ զպաշտօնեայս իմ, յորոց մի էր երբեմն և դա. իսկ 'ի գիրդ յայդ չիք խարդախութիւն, զի իմ է կնիք դորա և յանուն իմ, և ոչ յանուն Երուսաղէմի։

Հրամայեաց յայնժամ Նպարքոսն առ ծառայս իւր՝ բերել նմա վերարկու պատուոյ. զի այր այդպիսի ասէ, որ հաւատարիմ է յԱրքունիս եւ սիրելի ժողովրդեան իւրոյ՝ կալցի զՊատրիարքութիւնն Երուսաղէմի։ Եւ իբրեւ բերին զվերարկուն, ետ զգեցուցանել նմա 'ի մէջ ատենին յանդիման Մարտիրոսեանց։ Յառաջ ընթացաւ Եղիազար՝ համբուրել զքղանցս Նպարքոսին, և նա ասէ. երթ և արա աղօթս վասն կենաց Թագաւորին։ Եւ եղեւ 'ի մեկնիլ ամենեցուն յատենէ անտի՝ ելին և Մարտիրոսեանք և Թլթըլեանք ափշեալք և կորացեալք, և ցիր ու ցան լեալ գնացին յայլ և այլ տեղիս՝ ոչ կարելով տանել կատականաց քաղաքացւոյն։ Եւ այս եղեւ 'ի վերջն Մարտի յաւուր տօնի մտից Ս. Լուսաւորչին 'ի վիրապն։ Եւ Եղիազար հաճեցուցեալ զՆպարքոսն՝ էառ և 'ի Թագաւորէն հրովարտակ 'ի հաստատութիւն իշխանութեան իւրոյ, և եկն 'ի Կոստանդինուպօլիս։

Հաստատեալ Եղիազարու 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի միանգամայն եւ յառանձին կաթուղիկոսութեան իւրում, առաքեաց վաղվաղակի թուղթս 'ի Կոստանդինուպօլսոյ յայլ և այլ կողմանս իբր աւետաւորութիւն իմն